ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԴԱՍԻՆ

Ղեկավար՝ Ավետիսյան Կարինե

Հետազոտող ուսուցիչ՝ Էլզա Մկրտչյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում 6
Արժեքային համակարգի ձևավորումը պատմության առարկայի դասավանդման շրջանակներում 12
Եզրակացություն 18
Օգտագործված գրականության ցանկ 23

Ներածություն

Ներկայիս մարտահրավերներին համահունչ քայլելու և նոր հորիզոններ նվաճելու համար հատկապես մեծ կարևորություն է ստանում արժեքային համակարգերի ճիշտ սերմանումը և ձևավորումը կրթական համակարգում: Հայաստանյան իրականության մեջ վերջին շրջանի արհավիրքները ու խելացնոր իրադարձությունները էլ ավելի ամրապնդեցին այն միտքը, որ հատկապես պատմության առարկայի դասվանդման ժամանակ հատուկ կերպով պետ է անդրադարձ կատարվի արժեքային համակարգի ստեղծմանը: Պատմության դասաժամերին արժեքային համակարգի ստեղծումը առավել էականորեն հնարավորություն է տալիս առերեսվելու անցյալի, մշակույթային ժառանգությունների և նեցուկ լինելու այդ արժեքների պահպանման համար: Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, հիմնախնդիր է. վտանգված են սովորողների ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեք» հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք: Որպես այս ուղղության ներկայացուցիչ՝ կարելի է համարել Մ. Ռոկիչին, ով արժեքները համարում է կայուն համոզմունք այն համատեքստում, որ վարքի որոշակի ձևը կամ գոյության վերջնական նպատակը նախընտրելի է անձնային կամ սոցիալական տեսանկյունից:[1]

Երկրորդ խմբում կարելի է ներառել այն սահմանումները, որոնց հեղինակները «արժեքը» (կամ «արժեքային կողմնորոշումը») սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ կամ նմանատիպ երևույթ (Մ. Վեբեր, Ա. Զդրավոմիսլով, Դ.Ուզնաձե): Դ.Ուզնաձեն դիրքորոշումը մեկնաբանում է որպես անձի կամ խմբի սոցիալական փորձի միջոցով ձևավորված նախատրամադրվածություն սոցիալապես նշանակալի օբյեկտները ընդունելու և գնահատելու, ինչպես նաև որոշակի գործողություններին անձի կամ խմբի պատրաստվածությունը, որոնք ուղղված են սոցիալապես նշանակալի օբյեկտներին:[2] Ա. Զդրավոմիսլովի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումները անձի դիրքորոշումներն են նյութական և հոգևոր մշակույթի արժեքների նկատմամբ: Մ. Վեբերը արժեքը մեկնաբանում է որպես այս կամ այն պատմական ժամանակաշրջանի դիրքորոշում, որպես դարաշրջանին հատուկ հետաքրքրասիրության ուղղություն:[3]

---

[1] Rokeach M., The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973.
[2] Узнадзе Д. Н., Психология установки. СПб.: Питер, 2001. «Психология-классика», 416 с.
[3] Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.

Հայոց պատմություն առարկայի ուսուցման գլխավոր նպատակն ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից անհատի, հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է:[4]

Թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ձևավորվելիք և արդեն կայացած դպրոցների կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Հետազոտության մեթոդաբանություն: Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են տեսական՝ մասնագիտական գրականության վերլուծություն, էմպիրիկ՝ դիտարկում, փորձարարական ուսուցում մեթոդները:

---

[4] Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն 8-9 դասարան, ուսուցչի ձեռնարկ , Երևան, 2013թ

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: [5]

Նախ հասկանանք թե ինչ է արժեհամակարգը, ինչպիսի բնութագրումներ կան: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը

[5] Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentvie

սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

21-րդ դարի մեր պատկերացրած ժամանակակից դպրոցում դաստիարակության ու կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին գոյությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Արժանապատիվ քաղաքացի մեծացնելու համար պետք է ձևավորել ճիշտ արժեքային համակարգ, իսկ այն ձևավորվում է դպրոցում և յուրաքանչյուր առարկայի դասավանդման միջոցով:

Դեռահասության տարիքում է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրա մեջ ձևավորել առողջ արժեքներ, ապագայի, հասարակության համար դաստիարակել քաղաքակիրթ քաղաքացիներ:

Արժեքն երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ,

այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի:

Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը

Առանձնահատուկ կերպով պետք է նշել, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- ✓ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- ✓ կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը ու դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- ✓ ունենա ազգային ինքնագիտակցություն,
- ✓ կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- ✓ ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

- ✓ գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- ✓ գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- ✓ գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Հենց այստեղից էլ դրսևորվում է արժեհամակարգերի ստեղծման ու կիրարկման ճշգրիտ ճշգրիտ մոտեցումները:

Ժամանակին մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը ճիշտ է արժևորել հայ ազգային կրթության դերը. «Հայ ժողովուրդն ինքնըստինքյան ոչ միայն ամենաքաղաքակրթվածն է, այլև հենց այն ազգությունն է, որի բնավորությունն ու ապրելակերպը նպաստում են, որ նա լուսավորություն տարածի ամենուր, հարևանների մեջ»:[6] Հենց հայ մեծերն են եղել արժեհամակարգի ստեղծողները և փոխանցել սերնդեսերունդ:

Ընդհանրապես թե աշակերտների և թե ուսանողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը: Ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում

[6] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950, էջ 87:

են դրանց համակարգման հիման վրա: Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները, գոյություն ունեն անթիվ քանակով:[7]

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակության մեջ պետք է արտացոլվեն այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները: Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը. դա բազմիցս արտացոլվել է և՛ մանկավարժական, և՛ հոգեբանական հետազոտություններում: Իմացական բաղադրատարրը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական - ճանաչողական գործընթացների, սոցիալական փորձի արդյունքում: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իմացական, ճանաչողական և վարքային բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները: Վարքային բաղադրատարրը ներկայացնում է անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները: Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներ են, դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում: Բաղադրատարրերից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել անձի արժեքային ողջ համակարգի փոփոխության:

---

[7] Шишов С.Е., Кальней В.А. Школа: мониторинг качества образования. - М., 2000.

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունը ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված են դպրոցում ուսուցման նպատակների, դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա:

Այդ իսկ պատճառով էլ կրթական ոլորտում ներդրվում են տարատեսակ համակարգեր արժեքների ձևավորման, արդեն իսկ ամրացած արժեքների կայունության ապահովման համար:

Արժեքային համակարգի ձևավորումը պատմության առարկայի դասավանդման շրջանակներում

Կրթության բարեփոխումների ներկա փուլում խիստ ժամանակահունչ է կրթադաստիարակչական աշխատանքների բովանդակային վերաիմաստավորումը, արժեքային համակարգերի ձևավորումը հատկապես այնպիսի առարկաների շրջանակներում, ինչպիսին է պատմության առարկան:

«Պատմություն» առարկայի արժեհամակարգի ձևավորումը կարևոր գործընթաց է, որը նպաստում է ուսանողների և աշակերտների ըմբռնման և անցյալի նկատմամբ հարգանքի, ինչպես նաև մշակութային և պատմական գրագիտության զարգացմանը: Ահա պատմության դասաժամին արժեհամակարգի ձևավորման մի քանի հիմնական սկզբունքներ և մոտեցումներ.

- ✓ Հասկանալով անցյալի կարևորությունը. Օգնեք աշակերտներին գիտակցել, որ անցյալը կարևոր է ներկայի և ապագայի համար: Անցկացրեք դասեր, որտեղ կխոսեք հիմնական իրադարձությունների և անհատականությունների մասին, որոնք ազդել են համաշխարհային պատմության վրա:
- ✓ Քննադատական մտածողության զարգացում. Խրախուսեք սովորողներին վերլուծել պատմական աղբյուրները, բացահայտել դրանց հավաստիությունը և կողմնակալությունը: Սա կօգնի նրանց զարգացնել քննադատական մտածողությունը և տեղեկատվությունը գնահատելու կարողությունը:
- ✓ Հարգանք բազմազանության նկատմամբ. Ուշադրություն դարձրեք մշակույթների, ժողովուրդների և պատմության ժամանակաշրջանների բազմազանությանը: Շեշտեք, որ յուրաքանչյուր մշակութային ներդրում ունի արժեք և սովորեցրեք աշակերտներին հարգել և հասկանալ տարբերությունները:

- ✓ Պատմության էթիկական ասպեկտները. Քննարկեք աշակերտների հետ պատմական իրադարձությունների հետ կապված էթիկական խնդիրները: Օգնեք նրանց ճանաչել բարոյական դասերը, որոնք նրանք կարող են սովորել անցյալի սխալներից և հաջողություններից:
- ✓ Անկախ հետազոտություն. Խրախուսեք աշակերտներին ինքնուրույն ուսումնասիրել պատմական թեմաները: Սա թույլ կտա նրանց ավելի խորանալ նյութի մեջ, զարգացնել հետազոտական հմտությունները և ձևավորել սեփական կարծիքը:
- ✓ Առաջնորդության և հերոսության օրինակների ուսումնասիրություն. Հերոսություն, առաջնորդություն և քաջություն դրսևորած պատմական դեմքերի ուսումնասիրությունը կարող է ոգեշնչել ուսանողներին և աշակերտներին զարգացնել իրենց սեփական որակները:
- ✓ Պատմության կապը ներկայի հետ. Ցույց տվեք ուսանողներին, թե ինչպես է անցյալն ազդում ներկայի վրա: Քննարկել պատմական իրադարձությունների և ժամանակակից խնդիրների միջև զուգահեռները:
- ✓ Քաղաքացիության զարգացում. Ընդգծեք հասարակության մեջ ակտիվ մասնակցության կարևորությունը: Բացատրեք, թե ինչպես են պատմական իրադարձությունները ազդում քաղաքացիության և քաղաքական մասնակցության վրա:
- ✓ Իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանք. Բացատրեք ուսանողներին այն պայքարները, որոնք մղվել են քաղաքացիական իրավունքների և ազատությունների հասնելու համար և ընդգծել դրանց կարևորությունը:
- ✓ Տարբեր տեսակետների համեմատություն. ցույց տվեք ուսանողներին, որ պատմությունը կարելի է տեսնել տարբեր

տեսակետներից և խրախուսեք վերլուծության և համեմատության հմտությունների զարգացումը:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան: Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Հայոց պատմություն

առարկայի նպատակներից ամենակարևորը, զինելն է աշակերտներին ազգային արժեքներով:

Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը:[8]

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից ամենագլխավորը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն եւ ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Հայոց պատմություն առարկայի նպատակներից ամենակարևորը, զինելն է աշակերտներին ազգային արժեքներով: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին, առավել քան երբեք, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ:

Իսկ արդյոք ինչպիսի քայլերով կարելի է հասնել սերունդներին ազգային արժեքներով զինելու, հայրենասիրությամբ սերմանելու գործընթացում: Պատմություն առարկան դասավանդվող այն առարկաների շարքին է պատկանում, որը երբևիցե ցանկացած աշակերտի համար պետք է լինի ոչ թե դասաժամ ու անցնի, այն պետք է նստվածք տա, ու ամուր դաջվի յուրաքանչյուր

[8] Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում, էջ՝40:

հայ մատաղ և ապագա սերնդի մտքում, և ի հարկե հոգում ու սրտում: Թվարկենք կարևորագույն քայլերը հերականությամբ.

1. Տեղեկատվություն տրամադրել հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:
2. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:
3. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:
4. Հանրաճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:
5. Մատնանշել ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները: Հերոսական պատումները դարձնել ամենդասյա անբաժան մասնիկ:
6. Սովորողների մեջ սերմանել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի

ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը:

7. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:
8. Սովորեցնել, որ կարողանան գնահատեն իրենց հասած պատմական արժեքները:
9. Պատմական ձեռքբերումները կարմիր թելով պետք է լավագույնին ձգտելու օրինակներ դառնան:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Եզրակացություն

Ժամանակակից արագ տեմպերով վերափոխումների դարաշրջանում աճող սերնդի կրթության և դաստիարակության քայլերը իրականացվում են դպրոցում: Դպրոցականները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են: Հանրակրթական դպրոցում մանկավարժի խնդիրը ոչ միայն դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների, արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին և բարոյականության նորմերին: Ողջ մանկավարժական գործընթացը կազմակերպվում և կառուցվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ, որն էլ հնարավորություն է տալիս արտադրելու տվյալ հասարակության համար պիտանի քաղաքացի:

Ամփոփելով մեր կատարած վերլուծությունը կարող ենք փաստել, որ արժեքային համակարգի ձևավորումը դպրոցներում հատկապես մեր երկրի պարագայում գերխնդիր է դարձել:

Դպրոցում արժեհամակարգի ձևավորումը կարևոր դեր է խաղում աշակերտների զարգացման գործում ոչ միայն որպես ուսանող, այլև որպես անհատ: Արժեքները ծառայում են որպես ուղեցույց, որոշում են բարոյական կողմնացույցը, ազդում որոշումների կայացման և արտաքին աշխարհի հետ փոխգործակցության վրա: Ահա մի քանի քայլեր և սկզբունքներ, որոնք կարող են կիրառվել դպրոցական միջավայրում արժեքային համակարգի հաջող ձևավորման համար:

- ✓ Արժեքների հստակ սահմանում: Որոշեք այն հիմնական արժեքները, որոնք ցանկանում եք բերել ուսումնական գործընթացին: Սրանք կարող են լինել այնպիսի արժեքներ,

ինչպիսիք են հարգանքը, ազնվությունը, հանդուրժողականությունը, պատասխանատվությունը, համագործակցությունը և այլն:

- ✓ Ինտեգրում ուսումնական ծրագրին. Ներառեք այս արժեքները ուսումնական ծրագրում տարբեր առարկաների և գործողությունների միջոցով: Ասացեք ուսանողներին, թե ինչպես են այս արժեքները կիրառվում նրանց առօրյա կյանքում և ինչպես են դրանք առնչվում ուսումնական նյութին:
- ✓ Դրական օրինակ. տնօրինությունը, ուսուցիչները և դպրոցի այլ անձնակազմը պետք է օրինակ բերեն հաստատված արժեքները պահպանելու հարցում: Նրանց վարքագիծը և ուսանողների հետ շփումը պետք է համապատասխանի այս արժեքներին:
- ✓ Երկխոսություն և քննարկում. Կազմակերպեք կանոնավոր քննարկումներ, դասաժամեր կամ ֆորումներ, որտեղ ուսանողները կարող են քննարկել արժեքները և կիսվել իրենց մտքերով և փորձով:
- ✓ Նախագծեր և գործնական առաջադրանքներ. Առաջադրանքները, որոնք կենտրոնանում են արժեքները գործնականում կիրառելու վրա, կարող են օգնել ուսանողներին ավելի խորը սովորել դրանք: Դրանք կարող են լինել սոցիալական պատասխանատվության նախագծեր, կամավորական նախաձեռնություններ և այլն:
- ✓ Աջակցող միջավայրի ստեղծում: Ապահովեք ապահով և ոգեշնչող միջավայր, որտեղ ուսանողները կարող են ազատորեն արտահայտել իրենց մտքերը, զգացմունքները և արժեքների հետ կապված խնդիրները:
- ✓ Մշտական թարմացում և հարմարեցում: Հասարակությունն անընդհատ փոխվում է, և արժեքները նույնպես կարող են փոխվել: Կարևոր է պարբերաբար վերանայել և հարմարեցնել արժեհամակարգը՝ այն ընթացիկ և համապատասխան պահելու համար:

- ✓ Համագործակցություն ծնողների հետ. Ներգրավել ծնողներին արժեհամակարգի ձեւավորման, համատեղ միջոցառումների, զրույցների, խորհրդակցությունների անցկացման գործընթացում:
- ✓ Աջակցություն և պարգևատրում. Պարգևատրեք և ճանաչեք ուսանողների ջանքերը հաստատված արժեքները կյանքի կոչելու համար: Սա կարող է լինել մրցանակների, գովասանքի կամ ճանաչման այլ ձևերի միջոցով:
- ✓ Մշտական ուսուցում. Ուսուցման արժեքները չպետք է սահմանափակվեն տարրական դպրոցով. Շարունակեք զարգացնել և ամրապնդել ձեր արժեքային համակարգը ավագ դպրոցում և դրանից դուրս:

Դպրոցում արժեհամակարգի ձևավորումը երկարատև գործընթաց է, որը պահանջում է ողջ ուսուցչական անձնակազմի, ուսանողների, ծնողների և ղեկավարության համակարգված ջանքերը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Արժեքները առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք մշակույթի անքակտելի մաս են կազմում, և , հետևաբար արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանալ մշակութային տվյալ ժամանակաշրջանի բնորոշ խնդիրները: Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ՝ ինդիվիդուալիզմ - կոլեկտիվիզմ, ֆեմինինություն մասկուլինություն,

ներդաշնակություն, հավասարություն և այլն, որոնց բազմազանությունը թույլ է տալիս վեր հանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը:

Յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը: Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է այլև հարմարվում է հասարակական կյանքին ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,վարքագծային նորմեր, յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը: Ժամանակակից հասարակության կարևոր խնդիրներից է ազգային և համամարդկային արժեքների համադրումն ապահովելը, իհարկե առաջնային դիրքը վերապահելով ազգային արժեքներին:

Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքները ու նպատակները: Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և ապահովվում է ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը և փոխանցումն հետագա սերունդներին:

Ամփոփելով մեր կատարած հետազոտությունները և իրականացրած վերլուծությունները կարող ենք փաստել, որ արժեհամակարգերի ձևավորում հատկապես դպրոցներում առաջնային ու կարևորագույն հարցերից է հատկապես մեր երկրի համար այս օրհասական ևարհավիրքներին դիմակայելու ժամանակահատվածում: Ինչպես արդեն տեսանք մեր հետազոտությունների ընթացքում, արժեքային համակարգի ստեղծումը պատմության առարկայի դասավանդման գերխնդիր ու գերնպատակն է: Պատմության ճանաչողական և գիտաճանաչ տեխեկատվության միջոցով են

սերունդները մեր ազգային արժեքները վեր հանում և միջազգային ասպարեզում ներկայանում որպես գերհզոր ու բազմափորձ արժեքային համակարգ ունեցող երկիր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն 8-9 դասարան, ուսուցչի ձեռնարկ , Երևան, 2013թ Rokeach M.,
2. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում, էջ՝40:
3. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950, էջ 87:
4. Шишов С.Е., Кальней В.А. Школа: мониторинг качества образования. - М., 2000.
5. The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973.
6. Узнадзе Д. Н., Психология установки. СПб.: Питер, 2001. «Психология-классика», 416 с.
7. Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.
8. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentvie